

Արձանագրություն №8/2013-2014

<<Երևանի պետական համալսարան>> պետական ոչ առևտրային կազմակերպության
գիտական խորհրդի՝ 2014թ. հունիսի 25-ին տեղի ունեցած թիվ 8 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 63-ը (վաթսուներեք):
Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի
առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. Պարգևատրումներ և շնորհավորանքներ ԵՊՀ հիմնադրման 95-ամյակի կապակցությամբ:
2. Ամբիոնի վարիչի ընտրության մասին ֆակուլտետների գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատում (զեկ.՝ հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Ն. Պետրոսյան, բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ա. Սահակյան):
3. Դոցենտի, պրոֆեսորի գիտական կոչումների շնորհում (Ձեկ.՝ հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Ն. Պետրոսյան, բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ա. Սահակյան)
4. Գիտական համակազմի մրցույթ: (Ձեկ.՝ հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Ն. Պետրոսյան, բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ա. Սահակյան)
5. Տեղեկատվություն 2014-15 ուստարվա առկա ուսուցմամբ բակալավրիատի ընդունելության իրավիճակի մասին: (Ձեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան)
6. Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում կառուցվածքային փոփոխություններ կատարելու մասին (զեկ.՝ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ղեկան Ա. Ա. Սահակյան)
7. ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (զեկ.՝ ԵՊՀ գիտխորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի նախագահ Գ. Ս. Ղազինյան)
8. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (զեկ.՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան Է. Ս. Գևորգյան)
9. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտ ստեղծելու և ինստիտուտի կանոնադրությունը հաստատելու մասին (զեկ.՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան Է. Ս. Գևորգյան)
10. ԵՊՀ <<Քվանտային տեխնոլոգիաներ և նոր նյութեր>> գիտակրթական կենտրոնի կանոնադրությունը հաստատելու մասին (զեկ.՝ տեսական ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր Գ. Յ. Կրյուչկյան)
11. Ընթացիկ հարցեր

1 ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին նվիրված ՈԻԳԸ հոբելյանական գիտական նստաշրջանի հողվածների ժողովածուն (բնագիտական և հասարակագիտական առանձին հատորներով) հրատարակության երաշխավորելու և այն որպես թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության համար ընդունելի ժողովածու ճանաչելու հարցում ԲՈՀ-ին միջնորդելու մասին:

2 Ռուսաստանի Դաշնության գիտության վաստակավոր գործիչ, ՆԳՆ վաստակավոր աշխատակից, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Յուրի Միհրանի Անտոնյանին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու մասին:

3 Յենայի Ֆ. Շիլլերի համալսարանի մարդու գենետիկայի ինստիտուտի լաբորատորիայի ղեկավար, դոկտոր Թոմաս Լիրին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու մասին:

4/Կանադայի Մանիտոբայի համալսարանի ֆիզիկայի և աստղագիտության բաժանմունքի պրոֆեսոր Տապաշ Չակրաբորտին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու մասին:

5/ Հավանականությունների տեսության ամբիոնի դոցենտ Կարեն Գասպարյանի հեղինակած «Տեսական և կիրառական վիճակագրություն» վերնագրով դասագիրքը հրատարակության երաշխավորելու և որպես դասագիրք ճանաչելու հարցում ՀՀ կրթության և գիտության նախարարության առջև միջնորդելու մասին:

6/ «ԵՊՀ քիմիայի ֆակուլտետ» կառուցվածքային ստորաբաժանումը «ԵՊՀ դեղագիտության և քիմիայի ֆակուլտետ» վերանվանելու մասին:

7/ «ԵՊՀ դեղագործական քիմիայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը «ԵՊՀ դեղագիտության ամբիոն» վերանվանելու մասին:

8/ «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսում «Ռուս բանասիրություն» սերիա ստեղծելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. Ռեկտոր Ա. Սիմոնյանը շնորհավորեց գիտական խորհրդի անդամներին և բոլոր ներկա գտնվողներին Համալսարանի հիմնադրման 95-ամյակի առթիվ՝ մաղթելով ստեղծագործական հաջողություններ և անձնական երջանկություն: Նա իր խոսքում նշեց, որ ԵՊՀ գիտական խորհրդի՝ հունիսի 11-ին կայացած հանդիսավոր նիստին հանձնել է միայն Համալսարանի ոսկե հուշամեդալով պարգևատրված աշխատակիցների պարգևները՝ ասելով, որ բազմաթիվ համալսարանականներ արժանացել են արժաթե մեդալի ու հուշամեդալի, ինչպես նաև պատվոգրերի, վաստակագրերի ու շնորհակալագրերի: Ռեկտոր Ա. Սիմոնյանը, պրոռեկտորներ Ա. Գրիգորյանը և Գ. Գևորգյանը հանդիսավոր կերպով գիտխորհրդի որոշ անդամների ու այլ համալսարանականների արժաթե մեդալներ ու հուշամեդալներ հանձնեցին:

2. Լսեցին. - Ֆակուլտետային ամբիոնի վարիչի ընտրության մասին ֆակուլտետների գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատման մասին:

ԵՊՀ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովների նախագահներ Գ. Հ. Պետրոսյանը և Ա. Ա. Սահակյանը ներկայացրին ԵՊՀ ֆակուլտետների գիտական խորհուրդների որոշումներով ամբիոնի վարիչ ընտրված պրոֆեսորներին և դոցենտներին՝ նշելով զբաղեցրած պաշտոնը, հավակնած պաշտոնը, տվյալներ նրանց գիտամանկավարժական գործունեության վերաբերյալ:

Ֆակուլտետի գիտական խորհուրդների կողմից ընտրված և ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացված ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդներն էին.

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Աշխատանքի վայրը, պաշտոնը (երբվանից)	Գիտական աստիճանը, կոչումը (մասնագիտ. շիֆր)	Ինչ պաշտոնի համար է դիմել
1.	Գաբուզյան Արա Հարությունի	Քրեական իրավունքի ամբիոնի վարիչ /2000 թ./	իրավագիտ. դոկտոր /2008/ ԺԲ.00.05 – քրեական իրավունք և կրիմինալոգիա - 20012	Քրեական իրավունքի ամբ. վարիչի
2.	Ապրեսյան Մարգարիտա Հրանտի	Անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի վարիչ/2001 թ./	բանասիր. գիտ. թեկնածու /1987/Ժ.02.07 – գերմանական լեզուներ, դոցենտ – 2004	Անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի վարիչի
3.	Վարդանյան Թրահել Գերասիմի	Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ /2009 թ./	աշխարհ. գիտ. դոկտոր /2013/ ԻԴ.03.01 – ֆիզիկական աշխարհագրություն, դոցենտ - 2004	Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչի
4.	Մաղյան Աշոտ Սերոբի	Դեղագործական քիմիայի ամբիոնի վարիչ /2003 թ./	քիմիական գիտ. դոկտոր /1997/ ԺԵ.00.01 – դեղագիտություն, պրոֆեսոր – 2003, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս - 2010	Դեղագիտության ամբիոնի վարիչի

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը նիստի մասնակիցներին առաջարկեց հարցեր ուղղել ամբիոնի վարիչի մրցույթի մասնակիցներին: Հարցեր չհնչեցին:

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Մարգարյան Հայրապետ (նախագահ)
2. Վարդագարյան Մարութ
3. Դիլբանդյան Սամվել
4. Աբրահամյան Անի
5. Ազարյան Արսեն

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 63 անդամները: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Հ. Մարգարյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	անվավեր
1.	Գաբուզյան Արա Հարությունի	59	2	2
2.	Ապրեսյան Մարգարիտա Հրանտի	55	4	4
3.	Վարդանյան Թրահել Գերասիմի	60	0	3
4.	Մաղյան Աշոտ Սերոբի	58	3	2

Որոշեցին. –

1. Հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:
2. Քվեարկության արդյունքների հիման վրա հավակնորդներին համարել ընտրված իրենց հայցած պաշտոններում:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

3. **Լսեցին.** – **Պրոֆեսորի և դոցենտի կոչում շնորհելու մասին:** Հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Հ. Պետրոսյանը և բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ա. Սահակյանը ներկայացրեցին նաև պրոֆեսորի և դոցենտի կոչման հավակնորդների մասին ամփոփ տվյալներ:

Պրոֆեսորի կոչման հավակնորդներն էին.

	Ազգանուն, անուն, հայրանուն	Աշխատանքային վայրը, պաշտոնը
1.	Նիկողոսյան Արթուր Գարեգինի	Ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի դոցենտ
2.	Հաջյան Գևորգ Սուրենի	Ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ամբիոնի դոցենտ
3.	Թորմաջյան Գայանե Գևորգի	Օրգանական քիմիայի ամբիոնի դոցենտ
4.	Վարդանյան Ռաֆիկ Հովակիմի	Աստվածաբանության ամբիոնի վարիչ
5.	Հովսեփյան Վոլոդյա Երվանդի	Տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ
6.	Պարոնյան Շուշանիկ Հարությունի	Միջմշակութային հաղորդակցության ամբիոնի վարիչ

Դոցենտի կոչման հավակնորդներն էին.

	Ազգանուն, անուն, հայրանուն	Աշխատանքային վայրը, պաշտոնը
1.	Հակոբյան Տիգրան Ստեփանի	Տեսական ֆիզիկայի ամբիոնի ասիստենտ
2.	Պետրոսյան Գևորգ Կամոյի	Տնտեսագիտության տեսության ամբիոնի ասիստենտ
3.	Սարգսյան Տիգրան Արտավազդի	Մերվիսի ամբիոնի ասիստենտ
4.	Աշիկյան Արմենուհի Աշոտի	Մանկավարժության ամբիոնի ասիստենտ
5.	Ավետյան Սարգիս Ռուդիկի	Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասիստենտ
6.	Քալաշյան Վաչե Ռոմեոյի	Հանրային կառավարման ամբիոնի ասիստենտ
7.	Գազարովա Դիանա Յուրիի	Ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի ասիստենտ
8.	Ասիկյան Սուսաննա	Անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի ասիստենտ

	Նիկիտի	
--	--------	--

Նույն հաշվիչ հանձնաժողովը կազմակերպեց պրոֆեսորի և դոցենտի կոչումների հավակնորդների քվեարկությունը ևս: Քվեարկությանը մասնակցեց 63 հոգի: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Հ. Մարգարյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	անվավեր
1.	Նիկողոսյան Արթուր Գարեգինի	62	1	0
2.	Հաջյան Գևորգ Սուրենի	63	0	0
3.	Թորմաջյան Գայանե Գևորգի	61	2	0
4.	Վարդանյան Ռաֆիկ Հովակիմի	58	4	1
5.	Հովսեփյան Վոլոդյա Երվանդի	41	21	1
6.	Պարոնյան Շուշանիկ Հարությունի	62	0	1
7.	Հակոբյան Տիգրան Ստեփանի	63	0	0
8.	Պետրոսյան Գևորգ Կամոյի	63	0	0
9.	Մարգարյան Տիգրան Արտավազի	63	0	0
10.	Աշիկյան Արմենուհի Աշոտի	63	0	0
11.	Ավետյան Մարգիս Ռուդիկի	61	1	1
12.	Քալաշյան Վաչե Ռոմեոյի	61	2	0
13.	Գազարովա Դիանա Յուրիի	49	14	0
14.	Ասիկյան Սուսաննա Նիկիտի	63	0	0

Որոշեցին. – 2.1 Հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:

2.2 Վերոնշյալ հավակնորդներին շնորհել պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ:

2.3 Տասնհինգ օրվա ընթացքում նրանց գործերը ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ շնորհված գիտական կոչումները հաստատելու և դիպլոմներ տալու համար

4. **Լսեցին.** – Գիտական համակազմի պաշտոնի հավակնորդներին իրենց հայցած պաշտոնում ընտրության մասին: Հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Պետրոսյանը ներկայացրեց գիտական համակազմի պաշտոնի հավակնորդներին՝ նշելով նրանց գիտական աստիճանի, գիտական աշխատանքի փորձի, հավակնած պաշտոնի և այլ կարևոր տվյալների մասին : Գիտական համակազմի պաշտոնի հավակնորդներն էին.

Հ / h	Ազգանուն / Անուն / Հայրանուն	Ստորաբաժանում	Գիտական աստիճան, կոչում, մասնագիտական կրթության որակավորում	Գիտական աշխատանքի փորձ	Գիտական աշխատ. թիվը	Հավակնած պաշտոնը
1.	Գևորգյան Աննա Սերգեյի	Քաղաքակրթական և մշակութային հետազոտ. կենտրոն	Արևելագիտության մագիստրոս իրանագիտության մասնագիտությամբ	01.09.2009 -ից	9	Կրտսեր գիտաշխատողի
2.	Մկրտչյան Տաթևիկ Սոկրատի	Քաղաքակրթական և մշակութային հետազոտ. կենտրոն	Արևելագիտության մագիստրոս արաբագիտության մասնագիտությամբ	2007թ.-ից	7	Կրտսեր գիտաշխատողի

3.	Մկրտչյան Սաթենիկ Սոկրատի	Քաղաքակրթական և մշակութային հետազոտ. կենտրոն	Պատմության մագիստրոս պատմության մասնագիտությամբ	2005թ.-ից	11	Կրտսեր գիտաշխատողի
4.	Քոչարյան Հայկ Մկրտչի	Քաղաքակրթական և մշակութային հետազոտ. կենտրոն	Պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ (արաբագիտություն)	2006թ.-ից	14	Ավագ գիտաշխատողի
5.	Հովհաննիսյան Դավիթ Արտաշեսի	Քաղաքակրթական և մշակութային հետազոտ. կենտրոն	Բանասիր. գիտութ. թեկնածու, պրոֆեսոր (արաբագիտություն)	1985թ.-ից	55	Առաջատար գիտաշխատողի
6.	Հախվերդյան Հեղինե Սոկրատի	Էկոլոգիական իրավունքի կենտրոն	Իրավագիտության մագիստրոս իրավագիտության մասնագիտությամբ	2008թ.-ից	7	Կրտսեր գիտաշխատողի
7.	Իսկոյան Աիդա Բագրատի	Էկոլոգիական իրավունքի կենտրոն	Իրավագիտության թեկնածու, պրոֆեսոր (քաղաքացիական իրավունք)	1962թ.-ից	23	Առաջատար գիտաշխատողի
8.	Թուրունջյան Քրիստիան	Եզիպտագիտության հայկական կենտրոն	Հնագիտության դոկտոր	1994թ.-ից	38	Առաջատար գիտաշխատողի

Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը նիստի մասնակիցներին առաջարկեց հարցեր ուղղել գիտական համակազմի պաշտոնի հավակնորդներին: Հարցեր չհնչեցին:

Նույն հաշվիչ հանձնաժողովը կազմակերպեց գիտական համակազմի պաշտոնի հավակնորդների քվեարկությունը ևս: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Հ. Մարգարյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	անվավեր
5.	Գևորգյան Աննա Սերգեյի	61	0	2
6.	Մկրտչյան Տաթևիկ Սոկրատի	62	1	0
7.	Մկրտչյան Սաթենիկ Սոկրատի	61	1	1
8.	Քոչարյան Հայկ Մկրտչի	61	1	1
9.	Հովհաննիսյան Դավիթ Արտաշեսի	62	1	0
10.	Հախվերդյան Հեղինե Սոկրատի	61	1	1
11.	Իսկոյան Աիդա Բագրատի	61	1	1
12.	Թուրունջյան Քրիստիան	61	1	1

Որոշեցին. –

4.1 Հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:

4.2 Քվեարկության արդյունքների հիման վրա հավակնորդներին համարել ընտրված իրենց հայցած պաշտոններում:

5. **Լսեցին. - Տեղեկատվություն 2014-15 ուստարվա առկա ուսուցմամբ բակալավրիատի ընդունելության իրավիճակի մասին:** Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը ներկայացրեց 2014-15 ուստարվա առկա ուսուցմամբ ԵՊՀ բակալավրիատի մասնագիտություններ դիմած դիմորդների թվի, դինամիկայի, մասնագիտությունների պահանջարկի մասին տեղեկատվություն:

Արտահայտվեցին. – Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յ. Վարդանյանը, ԻԿՄ ֆակուլտետի դեկան Վ. Դումանյանը, կենսաբանության ֆակուլտետի դեկան Է. Գևորգյանը:

Որոշեցին. -

1. Տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

6. **Լսեցին.** - ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում կառուցվածքային փոփոխություններ կատարելու մասին: Ֆակուլտետի դեկան Ա. Սահակյանը ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից միջնորդեց ԵՊՀ գիտական խորհրդին՝ Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնի և Օպտիմալ կառավարման տեսության և մոտավոր մեթոդների ամբիոնի վերակազմակերպմամբ Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում ստեղծել նոր երկու՝ Ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի կառավարման ու ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնները: Առաջարկվող փոփոխության հիմնավորումների թվում Ա. Սահակյանը շեշտեց այն հանգամանքը, որ նշված երկու ամբիոնների ստեղծմամբ կարելի է սպասարկել ֆինանսական մաթեմատիկա և ռիսկերի կառավարում մասնագիտությունների մեծացող պահանջարկը:

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Սիմոնյանը, պրոռեկտոր Գ. Գևորգյանը, տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Հ. Սարգսյանը:

Որոշեցին. –

6.1 <<Երևանի պետական համալսարանի ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոն>> և <<Երեվանի պետական համալսարանի օպտիմալ կառավարման տեսության և մոտավոր մեթոդների ամբիոն>> կառուցվածքային ստորաբաժանումների վերակազմակերպմամբ Երևանի պետական համալսարանի մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում ստեղծել <<Երևանի պետական համալսարանի ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի կառավարման ամբիոն>> ու <<Երևանի պետական համալսարանի ֆինանսական մաթեմատիկայի ամբիոն>> կառուցվածքային ստորաբաժանումները:

6.2 Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

7. **Լսեցին.** – ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունում փոփոխություններ կատարելու մասին: Պրոռեկտոր Գևորգյանը նշեց, որ առաջարկվող փոփոխությունը վերաբերում է ֆակուլտետի օրինակելի կանոնադրության մեջ գիտահետազոտական ինստիտուտի՝ որպես ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանում՝ ամրագրելուն, ինչը պայմանավորված է հատկապես Կենսաբանության ֆակուլտետում լաբորատորիաների վերակազմակերպմամբ <Կենսաբանության> գիտահետազոտական ինստիտուտ ստեղծելու անհրաժեշտությամբ:

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Սիմոնյանը, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յու. Վարդանյանը, կենսաբանության ֆակուլտետի դեկան Է. Գևորգյանը:

Որոշեցին. – ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունում կատարել առաջարկվող փոփոխությունները՝ ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումներին վերաբերող կետերում ամրագրելով նաև գիտահետազոտական ինստիտուտները:

8. Լսեցին. – ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կանոնադրությունում փոփոխություններ կատարելու մասին: Կենսաբանության ֆակուլտետի ղեկան Է. Գևորգյանը նշեց, որ ելնելով օրակարգի նախորդ հարցի տրամաբանությունից, անհրաժեշտ է ֆակուլտետի կանոնադրությունում կատարել փոփոխություն՝ որպես կառուցվածքային ստորաբաժանում ավելացնելով <Կենսաբանության> գիտահետազոտական ինստիտուտը:

Որոշեցին. – կատարել առաջարկված փոփոխությունը:

9. Լսեցին. – Կենսաբանության ֆակուլտետում <Կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտ> կառուցվածքային ստորաբաժանումն ստեղծելու և ինստիտուտի կանոնադրությունը հաստատելու մասին: Է. Գևորգյանը գիտախորհրդին ներկայացրեց առաջարկվող ինստիտուտի ֆունկցիաները, խնդիրները, կառուցվածքային կազմակերպումը և այլն:

Որոշեցին. – 9.1 – Կենսաբանության ֆակուլտետում ստեղծել <Կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտ> կառուցվածքային ստորաբաժանումը:

9.2 – Հաստատել <Կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտ> կառուցվածքային ստորաբաժանման կանոնադրությունը:

10. Լսեցին. – ԵՊՀ <Քվանտային տեխնոլոգիաներ և նոր նյութեր> գիտահետազոտական ինստիտուտի կանոնադրությունը հաստատելու մասին: Ինստիտուտի տնօրեն Գ. Յ. Կրյուչկյանը ներկայացրեց ԵՊՀ գիտախորհրդի 2014թ. ապրիլի 3-ի նիստի որոշմամբ ստեղծված ինստիտուտի ֆունկցիաները, խնդիրներն ու կազմակերպական կառուցվածքը:

Որոշեցին. – հաստատել ԵՊՀ <Քվանտային տեխնոլոգիաներ և նոր նյութեր> գիտահետազոտական ինստիտուտի կանոնադրությունը:

Ընթացիկ հարցեր:

Լսեցին. – ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին նվիրված ՈԻԳԸ հոբելյանական գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածուն (բնագիտական և հասարակագիտական առանձին հատորներով) հրատարակության երաշխավորելու և այն որպես թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության համար ընդունելի ժողովածու ճանաչելու հարցում ԲՈՀ-ին միջնորդելու մասին: Ռեկտոր Ա. Սիմոնյանը նշեց, որ ՈԻԳԸ-ի նստաշրջաններն ընթանում են հաջողությամբ, ֆակուլտետների գիտական խորհուրդները երաշխավորում են ՈԻԳԸ ժողովածուներում ընդգրկվող գիտական հոդվածները:

8.11.1 Որոշեցին. – Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության՝ ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին նվիրված հոբելյանական նստաշրջանի հոդվածների ժողովածուն (բնական և հասարակական գիտություններ՝ առանձին հատորներով) երաշխավորել հրատարակման:

8.11.2 Միջնորդել ՀՀ ԲՈՀ-ի առջև՝ նշված ժողովածուն ճանաչել որպես թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության համար ընդունելի հոդվածների ժողովածու:

Լսեցին. – Ռուսաստանի Դաշնության գիտության վաստակավոր գործիչ, ՆԳՆ վաստակավոր աշխատակից, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Յուրի Միհրանի Անտոնյանին, Յենայի Ֆ. Շիլլերի համալսարանի մարդու զենեոթիկայի ինստիտուտի լաբորատորիայի ղեկավար, դոկտոր Թոմաս Լիրին և Կանադայի Մանիտոբայի համալսարանի ֆիզիկայի և աստղագիտության բաժանմունքի պրոֆեսոր Տապաշ Չակրաբորտիին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչումներ շնորհելու մասին: Ռեկտոր Ա. Սիմոնյանը ներկայացրեց նշված անձանց

համառոտ կենսագրությունները, գիտության ու կրթության ոլորտում նրանց գրանցած նվաճումները. Առանձին անդրադարձ կատարեց նշված գիտնականների՝ ԵՊՀ իրավագիտության, կենսաբանության և ֆիզիկայի ֆակուլտետների համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների հետ ծավալված բեղուն համագործակցության փաստին և գիտխորհրդին առաջարկեց ընդունել ֆակուլտետների միջնորդությունները՝ նշված անձանց ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչումներ շնորհելու մասին:

Որոշեցին. (որոշումներ թիվ 8/11.2, 8/11.3, 8/11.4) – Յուրի Անտոնյանին, Թոմաս Լիրին և Տապալ Չակրաբորտիին շնորհել ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչումներ:

Լսեցին. - Հավանականությունների տեսության ամբիոնի դոցենտ Կարեն Գասպարյանի հեղինակած «Տեսական և կիրառական վիճակագրություն» վերնագրով դասագիրքը հրատարակության երաշխավորելու և որպես դասագիրք ճանաչելու հարցում ՀՀ կրթության և գիտության նախարարության առջև միջնորդելու մասին: Ռեկտոր Ա. Սիմոնյանը նշեց, որ դասագրքի հրատարակության և որպես դասագիրք ճանաչելու վերաբերյալ առկա նշված ամբիոնի և Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտխորհրդի երաշխավորությունները և առաջարկեց դասագիրքը երաշխավորել հրատարակության և միջնորդել ԿԳՆ առջև՝ այն որպես բուհական դասագիրք ճանաչելու հարցում:

Որոշեցին. –

8.11.5.1 ԵՊՀ հավանականությունների տեսության ամբիոնի դոցենտ Կարեն Վահանի Գասպարյանի «Տեսական և կիրառական վիճակագրություն» վերնագրով դասագիրքը երաշխավորել հրատարակության:

8.11.5.2 Միջնորդել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ նշված դասագիրքը որպես բուհական դասագիրք ճանաչելու հարցում:

Լսեցին. - «ԵՊՀ քիմիայի ֆակուլտետ» կառուցվածքային ստորաբաժանումը «ԵՊՀ դեղագիտության և քիմիայի ֆակուլտետ» վերանվանելու և «ԵՊՀ դեղագործական քիմիայի ամբիոն» ստորաբաժանումը «ԵՊՀ դեղագիտության ամբիոն» վերանվանելու մասին: Քիմիայի ֆակուլտետի դեկան Տ. Ղոչիկյանը և դեղագործական քիմիայի ամբիոնի վարիչ Ա. Սադյանը հանդես եկան ֆակուլտետի գիտական խորհրդի՝ նշված նախաձեռնությունների հիմնավորմամբ՝ հատկապես շեշտելով այն հանգամանքը, որ դեղագիտության մասնագիտության գծով ֆակուլտետում սովորող ուսանողները կազմում են բացարձակ մեծամասնություն, իսկ անվանափոխությունները թե բխում են այդ տրամաբանությունից, թե հետագայում կոնտինգենտի դրական դինամիկայի հնարավորություն են ստեղծում:

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Սիմոնյանը, պրոռեկտորներ Ա. Գրիգորյանն ու Գ. Գևորգյանը, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յու. Վարդանյանը, սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ա. Մկրտիչյանը, պատմության ֆակուլտետի դեկան Է. Մինասյանը:

Որոշեցին. –

8.11.6 «Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետ» կառուցվածքային ստորաբաժանումը վերանվանել «Երևանի պետական համալսարանի դեղագիտության և քիմիայի ֆակուլտետ»:

8.11.7 «Երևանի պետական համալսարանի դեղագործական քիմիայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը վերանվանել «Երևանի պետական համալսարանի դեղագիտության ամբիոն»:

Լսեցին. - Բանբեր Երևանի համալսարանի հանդեսի «Ռուս բանասիրություն» շարքը հրատարակելու մասին: Պրոռեկտոր Գ. Գևորգյանը գիտական խորհրդին ներկայացրեց համալսարանի ղեկավարության և ռուս բանասիրության ֆակուլտետի միջև պայմանավորվածությունն առ այն, որ նպատակահարմար է համարվում ֆակուլտետում հրատարակվող երկու հանդեսների փոխարեն «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսում հրատարակել առանձին շարք՝ «Ռուս բանասիրություն»: Առաջարկությունն ընդունվեց միաձայն:

Որոշեցին. -2015թ. հունվարից հրատարակել <<Բանբեր Երևանի համալսարանի>> հանդեսի <<Ռուս բանասիրություն>> շարքը՝ տարեկան երեք համարով:

Լսեցին. – Համալսարանում գործող ՏԵՄՊՈՒՄԻ բոլոր նախագծերում ընդգրկված աշխատակիցների համար որպես օրական աշխատավարձի չափ՝ ծրագրի ուղեցույցով նախատեսված վերին շեմերը սահմանելու մասին: Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը նշեց, որ ՏԵՄՊՈՒՄ ծրագրի շրջանակներում աշխատող համալսարանական աշխատակիցների վարձատրության համար առավելագույն ձեռնտու պայման է, երբ օրական աշխատավարձի հաշվարկը կատարվում է ոչ թե ըստ իրական տարեկան աշխատավարձի չափն աշխատանքային օրերին հարաբերելը, այլ պարզապես ՏԵՄՊՈՒՄ-ի ուղեցույցով սահմանված օրական աշխատավարձի վերին շեմը կիրառելը: Որպեսզի ՏԵՄՊՈՒՄ-ի նախագծերում աշխատող համալսարանականների վարձատրության հարցը այդ ձեռնտու պայմանով ապահովվի, անհրաժեշտ է, որ գիտխորհուրդն իր որոշմամբ ընդունելի համարի ֆինանսավորման նշված մոդելը:

Որոշեցին. – ՏԵՄՊՈՒՄ-ի նախագծերի շրջանակներում աշխատող համալսարանականների համար օրական աշխատավարձի չափ որոշելիս հիմնվել ՏԵՄՊՈՒՄ-ի ուղեցույցով նախատեսված աշխատավարձի վերին շեմի վրա:

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Սիմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

02.07.2014թ.